ՔՐԻՍՏԻՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ
ՀՏԴ 002.0

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՏՊԱԳԻՐ ԱՌԱՋԻՆ ԵՐԵՔ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ

Բանալի բառեր. այբբենարան, քերականություն, շարական, մատենագրություն, Ռիվոլա, Կղեմես Գալանոս, Հռոմ, դասագիրք:

Ключевые слова: азбука, грамматика, псалом, библиография, Ривьола, Клемент Галанос, Рим, учебник.

Key words: primer, grammar, canticle, bibliography, Rivola, Kghemes Galanos, Rome, textbook.

Ամեն մի լեզվի ուսուցում սկսվում է այբբենարանից ու տվյալ լեզվի քերականության դասագրքից: Այս առումով հետաքրքիր են հայերենի առաջին այբբենարաններն ու քերականության դասագրքերը, որոնք հանդես եկան հայ տպագրական գործի արշալույսին: Երեք դասագրքերն էլ տպագրվել են Իտալիայում և ոչ հայ հեղինակների կողմից: Դա հասկանալի է, որովհետև պապական Հռոմի միարարական շարժումը առավել հաջողություն կունենար, եթե կաթոլիկ քարոզիչները հայերենով ծավալեին իրենց գործունեությունը:

Առաջին դասագիրքը կոչվում է «Այբուբեն Հայոց – ALPHABETUM ARMENUM » և տպագրվել է 1623 թվականին:

Տիտղոսաթերթում գրված է, որ Գրիգոր ԺԵ Պապի հրամանով տպագրվել է «վասն հաստատութեան հաւատոյն կարգեալ» ժողովի, այսինքն՝ Պապական պրոպագանդի կամ Հավատասփյուռի ժողովի կողմից:

Ինչպես նշում է Ռ. Իշխանյանը, սա Հայոց այբուբենի երկրորդ հրատարակությունն է 1567թ. «Փոքր քերականութիւն»-ից հետո[1]:

Քերականությունը, ինչպես նաև հայերենով բերված նյութը ներկայացվում է զուգահեռ լատիներենով: Հայոց Այբուբենի վերևում գրված է «ALPHABETVM ARMENIUM», իսկ նրա ներքո՝ «Աիբուբիենք հայոց»: **Այբ**-ի փոխարեն **Աիբ** գրերը տպագրական վրիպակ չէ, որովհետև Այբուբենի տառերի շարքում ևս **Ա**-ի դիմաց այդպես է գրված: Նույնը վերաբերում է նաև լատիներենին, ուր **Ajb**-i փոխարեն գրված է **Aip:**

Այբուբենը ներկայացված է հետևյալ սկզբունքով: Նախ տառերն են իրենց գրաֆիկական նշաններով, ապա անվանումը և վերջապես չորրորդ

[1] Ռ. Իշխանյան, Հայ գրքի պատմություն, Երևան, 1977, էջ 329:

սյունակում լատիներենով գրված է տվյալ տառի հնչյունական արտասանությունը լատիներեն տառադարձությամբ և նրա կողքին՝ ունեցած թվային արժեքը: Չորս սյուներից յուրաքանչյուրի վերևում գրված է վերջինիս բացատրությունը լատիներենով:

Figura		Nominatio		
Poteflas				
Ա	ա	Աիբ	Aip	a 1
Բ	բ	Բեն	Pien	p 2

Ք-ից հետո բերված են նաև **և, օ, ֆ** տառերը:

Որպես քերականության տարբեր ձևերի համար բերվող օրինակներ՝ հայերենի տառաշարքից բերված են հոգևոր հասկացություններ ներկայացնող բառեր, որով ընդգծվում է նաև գրքի ոչ միայն քերականական ուսուցողական բնույթը, այլև, որ այն տպագրվել է Հռոմեական եկեղեցու կողմից: Երկրորդ՝ այն ուներ գործնական նպատակ, քանի որ դրանք լատին քարոզիչների կողմից իրենց խոսքում բոլորից շատ գործածվող բառերն էին լինելու, ինչպես, օրինակ, **Աստուած, Քրիստոս, Յիսուս, Տէր, սրբութիւն, կաթուղիկոս, վարդապետ, ծառայ, թագաւոր, հրեշտակ, առաքեալ** բառերը:

Գրքի վերջում հայերենով և հայատառ լատիներենով բերված են «Տէրունական աղօթք ըստ հայոց», Մարիամին ուղղված հրեշտակի Ողջույնը՝ «Ողջոյն քեզ Մարիամ»՝ լատիներեն նշանավոր «Ավե Մարիա»-ն, «Հավատո հանգանակը»: Գիրքն ավարտվում է «Լեթանիայք Սրբուհւոյ Աստուածածնին» շարքով, որտեղ որպես գովասանք Տիրամորն ուղղված տարբեր բնորոշումներ են միջնադարյան բնագրերից, որոնց կողքը գրված է «բարեխօսեա», ինչպես օրինակ.

Մայր Աստուծոյ բարեխօսեա
Մայր ամբիծ բարեխօսեա
Մայր հիանալի բարեխօսեա

Նման արտահայտությունների մի մասը վերցված են Տիրամոր բարեխոսությանը ապավինելու հայ միջնադարյան բանաստեղծության տարբեր տողերից կամ Տիրամորը վերաբերող աստվածաբանական բնորոշումներ են, ինչպես օրինակ.

Հաելիի արդարութեան,
Աթոռ իմաստութեան,
Վարդենի փթթեալ,
Տապանակ ուխտի,
Դուռն երկնից:[2]

Վերջում Քրիստոսին ուղղված խոսքն է «Գառն Աստուծոյ» բնորոշմամբ, որը գալիս է Հովհաննես Մկրտչի «Ահա գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի» նշանավոր բնորոշումից:

Այսպիսով՝ սկսած հայոց այբուբենին նվիրված առաջին գրքից, որպես քերականական և լեզվի ուսուցման օրինակներ բերված են բնագրային հատվածներ հին մատենագրությունից:

Այստեղ դրանք բացառապես կրոնական են՝ Աստվածաշնչից և լատին ծիսական ավանդույթից:

Ժամանակի ընթացքում աստիճանաբար օրինակներ են բերվում նաև հայ հոգևոր գրականությունից:

Երկրորդ դասագիրքը վերնագրված է Grammaticae Armenae-«Քերականութիւն հայոց»: Այն լույս է տեսել 1624թվականին Միլանում: Գրքի հեղինակն է ֆրանսիացի գիտնական , Միլանի Ս. Թովմաս եկեղեցու հոգևորական Ֆրանչիսկոս Ռիվոլան:

Քերականությունը գրված է լատիներեն: Հայերեն բերված են միայն լեզվական տերմինները և հայրենի քերականական ձևերը և դրանցով հոլովված և խոնարհված բառերը:

Ինչպես գրում է Վ. Դևրիկյանը. «Վերածնության շրջանի քերականագիտական աշխատանքներին բնորոշ ձևով՝ Ռիվոլայի քերականությունը կառուցված է գործնական քերականությունների օրինակով, որը լիովին համահունչ է Ամբրոսյան դպրոցի հետապնդած գործնական նպատակներին՝ ոչ թե ուսումնասիրել հայոց լեզուն, այլ այն սովորեցնել Արևելք ուղարկվող քարոզիչներին»[3]:

Քերականության այս ձեռնարկը կազմված է չորս մասից: Առաջինը հնչյունաբանությունն է, ուր ներկայացված է հայոց այբուբենը՝ ամեն տառի

[2] Նույն տեղում, էջ 14-15:

[3] Դևրիկյան Վ., Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում, մասն Բ, Լվովից Ամստերդամ (17-րդ դար), Երևան, 2014, էջ 57:

անվանմամբ և լատիներեն տառադարձությամբ: Ինչպես Հռոմի 1624թ. հրատարակության մեջ, այնպես և այստեղ Ա-ի դիմաց գրված է **Աիյբ**:

Հայոց Այբուբերը Ռիվոլան ներկայացնում է գրեթե այնպես, ինչպես այն բերված էր Հռոմի վերը նշված հրատարակության մեջ:

Հայ գրականության պատմության ուսումնասիրման տեսանկյունից շատ կարևոր է հայերենի գրատեսակներին նվիրված բաժինը, ուր հայերեն տառատեսակները ներկայացված են հետևյալ հաջորդականությամբ՝ բոլորգիր, նոտրգիր, երկաթագիր, գլխագիր, ծաղկագիր, գազանագիր: Վերջին երկուսը իրականում ոչ թե գրատեսակներ են, այլ զարդագրի տեսակներ: Ռիվոլան, գազանագիր ասելով, նկատի ունի կենդանագիրը:

Գրքի վերջում հայերենին զուգահեռ լատիներենով տեղ են գտել «Հայր Մերը» և «Երանեալ է այր» սկսվածքով սաղմոսը:

«Հայր մեր»-ի շարվածքում վերևի տողը հայերեն է, ներքևինը՝ նույնը լատիներեն: Համանման ձևով է բերված «Երանեալ է այր» սկսվածքով սաղմոսը:

Երկուսն էլ բնագրերից հետո բառ առ բառ իմաստաբերականական վերլուծության են ենթարկված, որը գրականագիտական բնույթի տեքստաբանական աշխատանք է:

Երրորդ դասագիրքը Կղեմես Գալանոսի «Քերական եւ տրամաբանական ներածութիւն» անվանվող գիրքն է: Այն տպագրվել է Հռոմում 1645 թվականին:

Գիրքը տիտղոսաթերթում վերնագրված է «Քերականական, եւ տրամաբանական ներածութիւն առ յիմաստասիրութիւնն շահելոյ»: Թեատինյան միաբանության անդամ Կղեմես Գալանոսը (1610-1666թթ.) որպես քարոզիչ գրում է գործնական քերականություն, որպեսզի դրա հիման վրա հայկական միջավայրում իրենց քարոզությունն իրականացնող լատին հոգևորականները կարողանային անմիջաբար հայերեն խոսել և ոչ թե թարգմանիչների օգնությամբ: «Շահելոյ» բառը, որը կցված է քերականությանը, ունի նաև օգտվել իմաստը: Նշանակում է, որ սա մի ձեռնարկ է, որից օգտվելու են հայերենի քերականությունը սովորելու համար:

Գրքի վերջում կա հայերեն-լատիներեն բառարան, որն ունի 1800 բառահոդված: Անհրաժեշտ է նշել, որ այն հայոց լեզվի ողջ բառապաշարին է վերաբերում:

Ռիվոլայի քերականությունը գրված էր լատիներեն, և փակագծերում հայերենով բերվում էին քերականական հասկացությունները և անվանումները: Գալանոսի քերականությունը այնինչ գրված է հայերեն, և փակագծերում քերականական հասկացությունները և տերմինները բերված են լատիներեն: Քանի որ սա ոչ թե տեսական քերականություն էր, այլ հայոց

լեզուն սովորելու գործնական ձեռնարկ, ուստի Գալանոսն ասում է, որ քերականության նպատակն է սովորեցնել ուղիղ (ճիշտ) գրել և խոսել:

Գալանոսը քերականությունը բաժանում է չորս մասի.

1. *«Յաղագս տառի և ուղղագրութեան»*
2. *«Յաղագս վանգի և բանաստեղծութեան»*
3. *«Յաղագս բառի և արտաբերութեան»*
4. *«Յաղագս բանի և շարադրութեան»*

Քերականության սկզբի ծավալուն խորագրում ևս քերականությունը բաժանված է չորս մասի. «Ուղղագրութիւն, բանաստեղծութիւն, արտաբերութիւն և շարադրութիւն»: Բանաստեղծությունը, սակայն, ավելի շատ ոչ թե այժմյան ըմբռնմամբ բանաստեղծությանն է վերաբերում, այլ բան-ին, որպես խոսքին, ըստ այդմ՝ խոսքաստեղծությանը:

Պատահական չէ, որ այն քննվում է «Վանգի և բանաստեղծութեան» բաժնում, թե վանկով ինչպես է ստեղծվում բանը՝ խոսքը, բառը:

Առաջին մասի «Յաղագս գրակազմութեան» բաժնում ներկայացնում է գրչության արվեստը՝ վայելչագրությունը: Առանձնացնում է երեք տեսակի գիր՝ գլխագիր՝ մեծատառը, բոլորգիր՝ փոքրատառը, և նոտրգիր: Այնուհետև բերվում է տպատառ Այբուբենը, տառերի անվանումները, որոնց կողքին նշում է դրանց լատիներեն տառադարձումները և տառերի թվային արժեքները:

17-19-րդ էջերում օրինակներ են բերվում շարականներից, որոնք հայ հին բանաստեղծություններից տպագրված առաջին օրինակներից են:

Գալանոսը տալիս է բանաստեղծության հետևյալ սահմանումը. **«Բանաստեղծութիւն է արհեստ քերթողաբանին, որով չափաւոր բանիւ զտաղ յարմարէ»[4]:** Ըստ նման բացատրության՝ բանաստեղծական արվեստը չափածո տողերով տաղ գրելն է: Այստեղ բանաստեղծությունը փաստորեն ունի տաղաչափության իմաստը, իսկ տաղը՝ բանաստեղծության:

Տաղաչափության հարցերը քննվում են «Յաղագս Ոտաշարութեան» բաժնում: Տաղաչափությունը այսպես է սահմանվում «Ոտաշարութիւն է հմտութիւն ինչ առ ի բաղկացուցանելոյ զոտսն ոտանաւոր տողին»[5]: Հետևաբար «Ոտաշարությունը»՝ տաղաչափությունը տաղի՝ բանաստեղծության ոտքերը՝ չափը կազմելու հմտությունն է:

Այնուհետև ներկայացվում են բանաստեղծության չափերը: Անապեստը անվանվում է վերջատանջ, քանի որ շեշտն ընկնում է վերջին վանկի վրա:

---

[4] Գղեմես Գալանոս, Քերական և տրամաբանական, Ներածութիւն, Հռոմ, 1645, էջ 10:
[5] Նույն տեղում, էջ 15:

Տաղաչափական տարբեր ձևերը ներկայացվում են շարականների տողերի միջոցով: Քանի որ Գալանոսի նպատակը եղել է բանաստեղծական տարբեր չափերը ներկայացնելը, որևէ մատնանշում չկա, թե բերվող տողի հեղինակն ով է, կամ այն որ կանոնի շարականից է վերցված:

Նման առաջին օրինակը հետևյալն է.

Աստուած Քոց Սուրբ վկայից վարձ շնորհեա փառաց[6]:



Հաջորդը Հովհաննես Մկրտչին նվիրված շարականի հետևյալ տողն է, որը բերված է տաղաչափական հետևյալ բաժանմամբ.

Արդար. արեգական. կարապետ. ես վեհա. գոյն:

Վանկաշերտային նման բաժանմանը հետևում են նաև՝

Ի Քեզ նայիմք լոյս անմատոյց Փըրկիչդ մերոյ:

Կամ

Անստեղծ արեգական լոյս ծագեա հոգոյս:

Քանի որ ըստ չափերի վանկատելիս դժվար էր լինում ընթերցելը, ուստի նախ բերվում է շարականի տողը, ապա ըստ բանաստեղծական չափի տրոհված տարբերակը.

Ճառագայթ փառաց նորոգէ զմըտաց լոյս:

Ճառա.գայթ փառ.աց նորո.գէ զմը.տաց լոյս:



Որպես օրինակ բերված են շարականային տողեր նման բաժանմամբ:

Այս ուրվագծային վերլուծությունը ներկայացնում է այն կարևոր իրողությունը, որ թեպետ այս դասագրքերը կրոնական ուղղվածություն ունեն, սակայն որոշակիորեն պատկերացում են տալիս հայ միջնադարյան գրականության պաշտոներգության որոշ ժանրերի վերաբերյալ:

[6] Նույն տեղում, էջ 16:

Ք. Մելքումյան

Հայոց լեզվի տպագիր առաջին երեք դասագրքերը
Ամփոփում

Ամեն մի լեզվի ուսուցում սկսվում է այբբենարանից ու տվյալ լեզվի քերականության դասագրքից: Այս առումով հետաքրքիր են հայերենի առաջին այբբենարաններն ու քերականության դասագրքերը, որոնք հանդես եկան հայ տպագրական գործի արշալույքին: Հետաքրքիր է, որ երեք դասագրքերն էլ տպագրվել են Իտալիայում ոչ հայ հեղինակների կողմից: Դա հասկանալի է, որովհետև պապական Հռոմի միաբարական շարժումը առավել հաջողություն կունենար, եթե կաթոլիկ քարոզիչները հայերենով ծավալեին իրենց գործունեությունը: Այս ուրվագծային վերլուծությունը ներկայացնում է այն կարևոր իրողությունը, որ թեպետ այս դասագրքերը կրոնական ուղվածություն ունեն, սակայն որոշակիորեն պատկերացում են տալիս հայ միջնադարյան գրականության պաշտոնական որոշ ժանրերի վերաբերյալ:

К. Мелкумян

Три первые печатные учебники армянского языка
Резюме

Изучение любого языка начинается с азбуки и учебника грамматики данного языка. В этой связи интересны первые азбуки армянского языка и учебники грамматики, которые вышли на заре армянской типографии. Интересно, что все три книги были опубликованы в Италии не армянскими авторами. Это понятно, так как братство римского папства имело бы наивысший успех, если бы католические проповедники вели бы свою деятельность по-армянски. В данной работе представлено такое важное обстоятельство, что, даже не имея прямого религиозного направления, эти учебники, однако, определенным образом дают представление о некоторых официальных жанрах армянской средневековой литературы.

K. Melqumyan

The First Printed Three Books Of Armenian
Summary

The learning of language begins with primer and with the textbook of language grammar. In this connection it is of paramount importance the first Armenian primers and grammar textbook, which evolved at the dawn of

Armenian printing. The first three textbooks were published in Italy by non-Armenian authors. Evidently the Roman congregation movement will have more success, if Catholic preachers expend their activity in Armenian. Though the textbooks have religious orientation they give an idea about medieval Armenian literature of some genres.